ւորն. եթէ ոք անլսող լիցի հրամանին՝ չէ նա 'ի ժողովրդենէ Ցունաց։ Ժողովեցան 'ի մի վայր մեծամեծք և փոքունք, նաւավարք և ճկնորսք և ռամիկք և եղեն ամբոխ մեծ, դիմեցին խուռն բազմութեամբ 'ի պալատն Արքունի, և աղմկեալ աղաղակէին՝ դատ արասցէ Տէր մեր Արքայ՝ դարձուցանել առ մեզ զվանս Ս. Ցակոբայ՝ զոր հանեալ են Հայք 'ի ձեռաց մերոց։ Այսպիսի խռովեալ ամբոխիւ մատուցին զգիրսն մին առ Արքայ և զմիւսն առ Վէզիրն։ Թագաւորն խնդրեաց զհրովարտակս երկուց աղգաց, եւ նոցա տարեալ մատուցին առ Վէզիրն, ուր էր և Մուֆթին՝ և զիւրաքանչիւրսն ուրոյն ուրոյն եդեալ 'ի քսակի կնքեցին և առաքեցին առ Թագաւորն, այլ նա ոչ զքսակսն երաց և ոչ զգիրսն ետես, այլ պատուէր ետ միում 'ի քսակակրաց՝ երթալ ամոքել զմիտս երկուց աղգաց՝ խաղաղիլ և մի եւս համարձակիլ այնուհետեւ տալ գիր աղաչանաց, և որպէս տիրեալ են տեղեացն այնոցիկ՝ դարձեալ այնպէս տիրեսցեն, և անհնազանդքն ունին կրել պատիժ պատուհասի։ Եւ նորա եկեալ ծանոյց զհրաման Արքային երկուց աղգաց։ Հայք դարձան ուրախութեամբ 'ի տեղիս իւրեանց, նոյնպէս և Ցոյնք՝ լի տրտմութեամբ, զի 'ի դերեւ ելին յոյս և ակնկալութիւնք նոցին, և յումպէտս վատնեցան ամբաւ դրամք. այլ ոչ կասեցան յետս՝ զի յետ աւուրց ինչ վերըստին դիմեցին առ մեծամեծս Դրան, և ձգեցին զնոսա 'ի կողմն իւրեանց, թէպէտեւ տոկոսիք պարտուց եւս քան զեւս յաւելեալ բարդէր, այլ չէր նոցա ինչ փոյթ։ Ապա հազիւ ուրեմն կարացին շրջել զմիտս թագաւորին՝ յետս պահանջել զառաջին հրովարտակն տուեալ Հայոց, զորմէ գրեցաք 'ի նախընթաց երեսն, զոր առաքեալ էին յԵրուսաղէմ։ Եւ Եպարքոսն առաքեաց անդ զզինակիր իւր բերել անտի զհրովարտակն։ Ցոյնք թելադիր լինէին սպանանել զերկուս Իշխանաւորս, որք եղեալ էին 'ի բանտի։ Հայք անկան 'ի վարանս եւ հոգային զփրկութիւն նոցա. թէպէտեւ ծախեցին զգումարս քսակաց, այլ առ ժամն չեղեւ ինչ օգուտ։ Այլ թէ զի՞նչ ինչ կրեցին 'ի միջոցիս յայսմիկ Պատրիարք վարդապետն և խորհրդականք նորին, երկար լինի և չէ հնար ընդ գրով արկանել։